

Հայաստանում բարձրակարգ հետազոտությունների զարգացման ծրագիր (ՀԲՀԶԾ)

Առաքելություն. Հայաստանի անվտանգությանը և տնտեսական աճին նպաստող նորարարական գիտահետազոտական ծրագրերի ծավալում:

Ռազմավարություն. ներգրավել ձեռնարկատիրական և կառավարչական փորձառությամբ մասնագետների: Ձերժ պահել նրանց վարչական անհարկի միջամտություններից և պաշտոնակալություններից: Արտոնել նրանց՝ առանց հապաղման սկսել հեռանկարային նախագծեր, շարունակել արդյունագործ ծրագրերը, և կամ դադարեցնել ոչ արդյունավետ հետազոտական նախագծերը:

Արդի աշխարհայացքով մասնագետների ներգրավումը ի հայտ կբերի նորարարական բարձր-տեխնոլոգիական մշակումներ, ինչպես նաև առաջադեմ ձեռնարկատիրական մտածելակերպով օժտված անձանց:

Կառուցվածք. անհրաժեշտ է նվազեցնել անուղղակի ծախսերը, պետք է բացառվեն ներդրումները ենթակառուցվածքների, աշխատանոցների, շենքերի վրա: Կազմակերպչական և կառուցվածքային ձևերը պետք է լինեն ճկուն և փոփոխվող՝ երկրի անվտանգության սպառնալիքներին և գիտատեխնիկական նվաճումներին համընթաց:

Գրասենյակները և աշխատանքային խմբերը պետք է ձևավորվեն և լուծարվեն ըստ անհրաժեշտության՝ ապահովելով արդիականությունը և առաջադիմությունը, թույլ տալով արագորեն կյանքի կոչել նորարարական լուծումներ և մոտեցումներ: ՀԲՀԶԾ-ի վարչակազմին պետք է կցվեն Հայաստանի անվտանգության վարչությունների լիազորված անձինք, թույլ տալով պահպանել Հրեզդ-ի կապը իրական և արդի խնդիրների հետ, հնարավորություն տալով հասցեատիրոջը փոխանցել լուծումները, տեխնոլոգիաները և գիտելիքը:

Դերն իբրև պաշտպանության գործակալություն. գործակալությունը պետք է ունենա խիստ որոշակի և հստակ սահմանված դեր: Այն պետք է կապակցվի ոչ թե մասնավոր խնդրի հետ, այլ տրամադրի տեխնոլոգիական լուծումների տարբերակներ Հայաստանի անվտանգության ամբողջ համակարգի համար, որպես մասնագիտացված «տեխնոլոգիական շարժիչ»:

ՀԲՀԶԾ-ն պետք է տեսնի այսօրվա կարիքներից և հոգսերից անդին, կանխատեսելով վաղվա պաշտպանության համակարգին անհրաժեշտ կարողություններ, և տեխնոլոգիական մշակումների միջոցով արագացնի դրանց կենսագործումը:

Հիմնական մարտահրավերներն ու թիրախային խնդիրները. կառույցը նպատակ ունի տեխնոլոգիական հնարավորությունները լծորդել պաշտպանական խնդիրներին և

բոլորովին նոր կիրառությունները բացահայտել և ներդնել պաշտպանական համակարգում:

ՀԲՀԶԾ-ի ներդրումը պետք է կենտրոնացված լինի տեխնոլոգիական այն մարտահրավերների վրա, որոնց հաղթահարումը հսկայական օգուտ կապահովի Հայաստանի պաշտպանության համակարգին:

Պետք է դիտարկել նույնիսկ այն խնդիրները և ներդրումները, որոնց տապալման հավանականությունը մեծ է: Նախապայման է ծրագրերի հիմքում արժեքավոր գաղափարների առկայությունը և անբասիր անհատների ներգրավումը: Հրեզդ-ի որոշումների կայացման գործընթացը պետք է լինի ճկուն, գերծ ձևականությունից, բայց նաև վերին աստիճանի արդյունավետ: Արագ, ճկուն և ոչ ձևական կառավարման պարբերաշրջանի հիմքում պետք է դրվեն հետևյալ փուլերը՝ խորհել, առաջարկել, քննարկել, որոշել, վերանայել:

Հիմնական ընթացակարգը. տեխնոլոգիական առաջադրանքը պետք է հստակեցվի, այն մանրամասնելով վերնից-ներքև, իսկ լուծումներն առաջադրվեն ներքևից-վերև՝ ներգրավելով Հրեզդ-ի ամբողջ անձնակազմը՝ բոլոր մակարդակներով: Հրեզդ-ի նախագծերին կցված կառավարիչները պետք է քննարկեն առաջարկուած մոտեցումները շահագրգիռ բոլոր կողմերի հետ:

Առաջընթացի գնահատումը. գործընթացի գնահատման համակարգը պետք է լինի մանրակրկիտ և լավ կազմակերպված: Նախքան յուրաքանչյուր նախագծի սկեյլը պետք է զգալի ջանքեր գործադրվեն սահմանելու մի շարք «ճակատագրական» հանգրվաններ, որոնցում կկատարվի առաջընթացի գնահատում: Դրական գնահատականի դեպքում նախագծի(երի) մեջ հետագա ներդրումը կհաստատվի միայն մինչև հաջորդ «ճակատագրական» հանգրվան:

Ռազմավարական պոռթկումներ. մշտապես փոփոխվող հանգամանքների և մարտահրավերների ներքո անհրաժեշտ է մշակել անընդմեջ զարգացող ռազմավարություն՝ կենտրոնացված սույն առաքելության հիմնական նպատակների շուրջ: Ռազմավարական պոռթկումների նպատակն է՝ ծրագրի ուշադրությունը և ջանքերը սևեռել որոշակի խնդիրների վրա, և կատարել ներդրումներ խիստ որոշակի գաղափարների և պատեհությունների սահմաններում:

Հակոբ Փանոսյան

Հայաստանի համար վերլուծա-հետազոտական և պլանավորման աշխատանքների իրականացման ինստիտուտի նախագահ